ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

<< 06 >> փետրվարի 2019թ. N 178-Լ

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 22-ի N 530-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 18-րդ կետի 7-րդ և 20-րդ ենթակետերով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2018 թվականի հոկտեմբերի 22-ի <<Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության կանոնադրությունը հաստատելու մասին>> N 530-Լ հրամանով հաստատված հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ լրացումները.

5-րդ կետի 18-րդ ենթակետից հետո լրացնել նոր ենթակետեր՝ հետևյալ բովանդակություններով.

<<18.1) հանրային իշխանության մարմինների կողմից ներկայացված բյուջետային հայտերի ուսումնասիրումը, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մուտքերի, բացառությամբ հարկային եկամուտների, միջնաժամկետ, տարեկան և եռամսյակային ծրագրավորումը, տարեկան և եռամսյակային ծրագրային ցուցանիշների ճշգրտումների հաշվառումը.

18.2) Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարների հաշվարկման աշխատանքների իրականացումը.

18.3) ՄԺԾԾ փաստաթղթի, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծերի եկամուտների համապատասխան բաժինների, բացատրագրերի, հավելվածների մշակումը, բացառությամբ հարկային եկամուտների.

18.4) բյուջետային մուտքերի դասակարգման և վերջինիս կիրառման կարգի կատարելագործման աշխատանքներին մասնակցությունը:>>

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Ա.ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ